ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

01 մարտի 2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, երրորդ անձինք՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Գործակալ 1» ՍՊ ընկերություն՝ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-24/7-Վ ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և 2023թ. դեկտեմբերի 29-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ կապված 1-3-րդ չափաբաժինների մասով «Գործակալ 1» ՍՊ ընկերությանը հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և «Գործակալ 1» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու հետ, անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերության ներկայացուցիչը 2024թ. հունվարի 8-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, երրորդ անձինք՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Գործակալ 1» ՍՊ ընկերություն՝ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-24/7-Վ ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և 2023թ. դեկտեմբերի 29-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ կապված 1-3-րդ չափաբաժինների մասով «Գործակալ 1» ՍՊ ընկերությանը հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և «Գործակալ 1» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու հետ, անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի (դատավոր Գ. Մազմանյան) 2024թ. հունվարի 12-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:

Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2024թ. փետրվարի 6-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումի թերությունները վերացվել են և որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127

հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2024թ. հունվարի 8-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սիլ ինշուրանս» ԱՓԲ ընկերությունն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, երրորդ անձինք՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Գործակալ 1» ՍՊ ընկերություն՝ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-24/7-Վ ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և 2023թ. դեկտեմբերի 29-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ կապված 1-3-րդ չափաբաժինների մասով «Գործակալ 1» ՍՊ ընկերությանը հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և «Գործակալ 1» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու հետ, անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2024թ. հունվարի 8-ին:

Թիվ ԵԴ2/0089/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. ապրիլի 12-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ